Առհասարակ թագուհու գահական ճառը հանգստացնող է։

Իրլանդական կալուածական վերանորոգութիւնը իրագործվում է իրլանդացիների համար չափազանց ասելի մարդու, ֆօրսթերի ձեռքով, որ արտաքոյ կարգի օրէնքների մոցնելու պատճառ դարձաւ և ինքը անձամբ նրանց գործադրում էր։ Կարելի է հաստատապէս ասել, որ Իրլանդիան չի հանգստանայ, մինչև նրա ամենապաս գործիչները, ինչպես Միքայել Դաւիթ, բանտարկված և կասկածող վարչութեան հսկողութեան տակ կը լինեն, որ մի և նոյն ժամանակ արտաքոյ կարգի իրաւունքներ ունի։ Այդ պատճառով շատ նպատակայարմար է կառավարութեան յայտնութիւնը իր պատրաստականութեան մասին ոչնչացնել այդ արտաքոյ կարգի օրէնքները, որոնք ոչ թէ միայն օգուտ չեն տալիս, այլ ընդհակառակն վրդովեցնում են բնակիչներին։ Այդպիսի օրէնքները և միջոցները միշտ և ամեն տեղ կառավարութեան ցանկացածի հակառակ հետևանքներ են ունեցել։ Մի և նոյն հետևանքը նրանք ունեցան և Իրլանդիայի մէջ։ Վրդովմունքը երկրի մէջ այդ օրէնքների գործադրութեան հետ զուգընթաց սաստկանում էր։ Փոխանակ յայտնի և բացարձակ ընդդիմադրութեան գոյացաւ գաղտնի և զգոյշ թշնամութիւն, որի դէմ բոլոր միջոցները անօգուտ են լինում։ Կալուածական միութեան գաղտնի իշխանութիւնը կատարեալ և գոռալ դարձաւ այն ժամանակից, երբ սկսեցաւ արտաքոյ կարգի օրէնքների գործադրութիւնը։

ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգների գլխաւոր քարտուղար Բլեն հաղորդեց լրագիրներին իր նամակի պատճէնը, որ նա գրել էր Գարֆիլդի պաշտպան Հենրի Ուէյլին, երբ սա հարցրեց, թէ Միացեալ Նահանգների կառավարութիւնը ինչպես է մտադիր վարվել Գարֆիլդի հետ։ Գարֆիլդի պաշտպանը գրեց Մինիստրին հետևեալ նամակը։ „Պարոն, Լէօն Գարֆիլդ գիտեմ ինձ, հարցնելով կարող են արդեօք նրան կարանաւորել Միացեալ Նահանգների մէջ, կամ յանձնել ռուսաց կառավարութեանը, եթէ վերջինը այդ բանը պահանջի։ Ես պատասխանեցի Գարֆիլդին, որ Միացեալ Նահանգների և Ռուսաստանի մէջ եղած դաշնակցութիւնների մէջ ոչինչ չը կայ յանցաւորներին յանձնելու մասին, այնպես որ նա չէ կարող յանձնված լինել Ռուսաստանի մէջ գործած որ և է յանցանքի համար։ Իմ այդ կարծիքի վրա յոյս դնելով, Գարֆիլդ, որ մինչև այդ ժամանակ գաղտնի էր ձանապարհորդում, բացարձակ յայտնեց իր ներկայութեան մասին Միացեալ Նահանգների մէջ։ Մինչև լրագիրների մէջ սկսեցաւ այդ հարցի արծարծելը, թէ արդեօք Գարֆիլդ պէտք է յանձնվի Ռուսաստանին թէ ոչ, իսկ խմբագիրներից մէկը այդ հարցի մասին խօսակցութիւն էր ունեցել Մինիստրի օգնականի հետ և այդ խօսակցութիւնը հրատարակվեցաւ նշանաւոր շատ լրագիրների մէջ։ Այդ խօսակցութեան ժամանակ Մինիստրի օգնականը մի կարծիք է յայտնել, որին միանում է Մինիստրը մտադիր է հետևել, եթէ ռուսաց կառավարութիւնը պահանջէր Գարֆիլդին։ Այդ կարծիքի համեմատ եթէ ռուսաց կառավարութիւնը ներկայացնէր Գարֆիլդի մեղաւորութեան ապացոյցները, Միացեալ Նահանգների կառավարութիւնը կը հրամայէր կալանաւորել Գարֆիլդին և յանձնել ռուսաց կառավարութեանը։ Մինիստրի օգնականը իր այդ հայեացքը նրանով էր արդարացնում, որ Գարֆիլդի արարքը յանցանք է համարվում լուսաւորված բոլոր ազգերի մէջ, որ դէպի այդ արարքը կրող քաղաքական պատճառները չեն ոչնչացնում նրա յանցաւոր բնաւորութիւնը, որ մի մարդուն կեանքից զրկելը յանցանք է, ով ուզում է լինի զոհը կայսր թէ գիւղացի և որ Միացեալ Նահանգները մարդասպանների ապաստան չեն կարող լինել։ Երբ առաջին անգամ իմ կարծիքը հարցրին Գարֆիլդի գործի մասին, ես կարծում էի, որ հարցը կանոնաւոր լուծելու համար բաւական է ուսումնասիրել Միացեալ Նահանգների օրէնքները և դաշնագիրները։ Բայց Մինիստրի օգնականի վերոյիշեալ կարծիքին նայելով, մեր կառավարութիւնը, կարելի համարելով կալանաւորել և յանձնել Գարֆիլդին, այս դէպքում աչքի առաջ չունի միայն գործող օրէնքները և դաշնագիրները։ Գարֆիլդի նկատի առնելով Մինիստրի օգնականի ասածները, վճռեց դիմել Անգլիայի հովանաւորութեանը, որ մերժեց նրան հանրապետութիւնը։ Այս փաստերի նկատի առնելով, ես խնդարհարար խնդրում եմ կառավարութիւնից միջոցներ գործ դնել, որպէս զի Գարֆիլդի իր կասկածները անհիմն համարէ։“ Հենրի Ուէյլ։ Բլեն այդ նամակին հետևեալ պատասխանը տուեց։ „Դուք պահանջում էք, որ ես իրրև գլխաւոր քարտուղար յայտնեմ, որ Լէօն Գարֆիլդի կարող է ծածկվել Միացեալ Նահանգների հովանաւորութեան տակ, եթէ ռուսաց կառավարութիւնը պահանջի նրան։ Ձեր նամակի հետ միաժամանակ ես ստացայ մի ուրիշը Պենսիլվանիայի միլարգելի քաղաքացուց, որ պահանջում է կառավարութենից պատասխանութիւն յայտնել Գարֆիլդին յանձնելու մասին։ Այդպիսով դուք երկուսդ էլ կամենում էք, որ ես ուսանելս անեմ պաշտօնական սովորութիւնները և իմ կառավարութեան աւանդութիւնները, առաջուց յայտնելով, թէ ինչպես կը վարվի կառավարութիւնը յայտնի դէպքերում որոնք շօշափում են իրաւաբանական ըսկզբունքներ և անձնական իրաւունքներ։ Դուք միևնոյն իրաւունքով կարող էք դիմել արդարութեան Մինիստրին հարցով, թէ ինչպես կը վճռէր նա Գարֆիլդի գործը, եթէ այդ գործը նրա քննութեանը յանձնվէր։ Դուք կարծում էք, որ Մինիստրութիւնը պարտաւոր է յայտնել իր կարծիքը այդ գործի մասին, որովհետև նրա անդամներից մէկը մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնել է իր անձնական կարծիքը։ Այդ մի և նոյն է, եթէ բարձր դատարանից խնդրվէր, որ նա առաջուց յայտնէր իր վճիռը մի որ և է նշանաւոր գործի մասին։ Դուք կարծում էք, որ Մինիստրութիւնը պարտաւոր է յայտնել իր կարծիքը այդ գործի մասին, որովհետև նրա անդամներից մէկը մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնել է իր անձնական կարծիքը։ Այդ մի և նոյն է, եթէ բարձր դատարանից խնդրվէր, որ նա առաջուց յայտնէր իր վճիռը մի որ և է նշանաւոր գործի մասին։ Դուք կարծում էք, որ Մինիստրութիւնը պարտաւոր է յայտնել իր կարծիքը այդ գործի մասին, որովհետև նրա անդամներից մէկը մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնել է իր անձնական կարծիքը։ Դուք մինչև այդ գաղտնի մը կամենում էք դիմել արդարութեան Մինիստրին հարցով, թէ ինչպես կը վճռէր նա Գարֆիլդի գործը, եթէ այդ գործը նրա քննութեանը յանձնվէր